№ 8 (12)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2021

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

8 (12)

ԵՐԵՎԱՆ 2021
ЕРЕВАН 2021
YEREVAN 2021

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №8 (12). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2021. – 242 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© *Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване*

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

ШЕДЕВРЫ ИСКУССТВА МИЛЬФЛЕРОВ

Ануш Карапетовна Егиазарян
anush.textile@mail.ru

Д.п.н., профессор,
профессор кафедры изобразительного искусства,
Армянский государственный педагогический
университет имени Хачатура Абовяна,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

Шпалера – это вытканный вручную стенной односторонний ковёр с сюжетной композицией. Является одним из интересных и уникальных видов декоративно-прикладного искусства. Одним из особых видов шпалеры является искусство мильфлёров, которые выделяются своим однотонным фоном, усыпанным множеством цветов (могут быть расположены очень плотно или более редко), и изображаться предельно натуралистично или стилизованно. Цветы почти что невозможно отличить от настоящих и именно в этом уникальность мильфлёров. Одной из вершин мильфлёрного искусства является знаменитый цикл из шести шпалер «Дама с единорогом».
Ключевые слова: декоративно-прикладное искусство, шпалера, искусство мильфлёров, вердюра, декоративная композиция, символика, множество цветов, дама, единорог.

Դեկորատիվ-կիրառական արվեստը իր մեջ ընդգրկում է ստեղծագործական այն բնագավառները, որոնցում ստեղծվում են գեղարվեստական կենցաղային իրեր (կահույք, գործվածք, աշխատանքի գործիք, ինչպես նաև զգեստ, զարդ)։ Այն ծառայում է միջավայրի, տոնակատարությունների, հանդիսությունների, ցուցադրությունների և այլ միջոցառում-

ների գեղարվեստական ձևավորման, ինչպես նաև գեղարվեստական կենցաղային իրերի պատրաստման նպատակին և հոգևոր արժեքներ ստեղծելուն: Դեկորատիվ կիրառական արվեստի կարևորագույն ճյուղ է համարվում շպալերի արվեստը [1]:

Հին Եգիպտոսում ռեպսային միահյուսքը հայտնի էր դեռ նոր թագավորության ժամանակներից (16–11-րդ դ.մ.թ.ա.):

Շպալերի մանածագործական հնարքները լավ հայտնի էին նաև նախակոլումբոսյան Ամերիկայում: Այդ արվեստի նմուշները լավ պահպանվել են Պերուի չոր կլիմայի շնորհիվ (ամենավաղ օրինակները թվագրվում են Ք.ա. 2500թ.):

Ասիայում տեխնիկայով, որը մոտ էր շպալերի մանածագործությանը, աշխատում էին չինացի վարպետները: Որոշ աղբյուրների վկայությամբ, այն օգտագործվում էր սկսած Խան ժամանակաշրջանից: Լավ հայտնի են Սուն ժամանակաշրջանի (10–13-րդ դդ.) և ավելի ուշ ժամանակաշրջանի, ընդհուպ մինչև 18-րդ դար, վարպետների աշխատանքները:

3-րդ դարի սկզբին ճապոնացիները ծանոթացան չինական մետաքսին և Նարայի ժամանակաշրջանում սկսեցին գործել պաստառագորգային գործվածքներ:

Գեղարվեստական մանածագործությունը Արևմտյան Եվրոպա եկավ մահմեդական Արևելքից մավրիտանյան Իսպանիայի միջոցով: Խաչակիրները 11–12-րդ դդ. Հարուստ ավարով վերադարնում էին Սուրբ Հողից, որտեղ, անկասկած, թանկարժեք իրերի հետ բերում էին նաև գորգեր և տարբեր գործվածքներ: Այդ ժամանակաշրջանից սկսվում է արևմտաեվրոպական պաստառագորգի պատմությունը: Սակայն ոչ թե Ֆրանսիայում, որը հետագայում ազդեցիկ դեր է կատարում այս արվեստի հետագա զարգացման մեջ, այլ Եվրոպայի հյուսիսում՝ Գերմանիայում: Տարբեր ժամանակներում պաստառագորգի մանածագործության առաջնության դափնիները պատկանում էին տարբեր կենտրոններին: 14-րդ դարում առաջատարը Փարիզն էր, հետո՝ Արրասը. 15-րդ դարում՝ Արրասը և Տուր-

նեն: 15–16-րդ դդ. `Լուարա գետի ավազանի քաղաքները: 16-րդ դարում՝ Բրուսսելը, Անտվերպենը, Ֆլանդրիայում՝ Աուդենարդեն, Իտալիայում՝ Ֆերրարան և Ֆլորենսը:

17–18-րդ դդ. Փարիզի Թագավորական մանուֆակտուրան և Բովեի մանուֆակտուրաները դառնում են առաջատար: Մինչև 18-րդ դարը եվրոպական մանուֆակտուրաներից լավագույները համարվում էին Ֆլամանդականներն ու ֆրանսիականները [2]:

Լուարա գետի ավազանի քաղաքներում (որտեղ Հարյուրամյա պատերազմի տարիներին տեղափոխվեցին փարիզյան շատ ջուլհակներ) 15-րդ դարի վերջին ձագեց շպալեռի հատուկ տեսակ, այսպես կոչված «միլֆլորներ» (ֆրանս. *mille fleurs* – հազարավոր գույներ):

Միլֆլորների թեմաները բավականին բազմազան են: Դրանք կարող են լինել այլաբանություններ, բարձրաշխարհիկ կյանքից հատվածներ, կրոնական կամ դիցաբանական թեմաներ: Բուսական մոտիվներից բացի հաճախ նաև պատկերվում են կենդանիներ և թռչուններ, ֆոնը լինում է կարմիր, կանաչ, մուգ կապույտ, հազվադեպ դեղին կամ սպիտակ: Ծաղիկները այս ֆոնին կարող են լինել շատ խիտ կամ ավելի նոսր, պատկերվում են հնարավորինս բնական կամ ոճային: Դժվար չի լինում գուշակել պատկերված բույսերը: Մասնագետները միլֆլորների վրա հաշվում են մոտ հարյուր տեսակի բույսեր: Նրանք բոլորը ունեն որոշակի սիմվոլիկ նշանակություն, որը հեշտությամբ ընկալվում էր դիտողի կողմից [3]:

Միլֆլորները լայն տարածում ունեն ամբողջ ֆրանկո-ֆլամունդյան տարածաշրջանի շպալերային գործվածքում, բայց ենթադրվում է, որ ի սկզբանե նրանք հայտնվել են Ֆրանսիայում, մասնավորապես Թուրինում: Նրանց ծագումը թվագրվում է 15-րդ դարին, ֆրանսիական շպալերների արտադրությունը հարյուրամյա պատերազմի պաճառով Փարիզից տեղափոխվեց Լուարի ավազանում տեղակայված քաղաքներ: Ենթադրվում է, որ միլֆլորները ի հայտ են եկել ավանդական սովորույթի ազդեցության հիման վրա՝ Քրիստոսի Մարմնի տոնի օրվա առթիվ ուղին զարդարվում

էր կտորներով, որոնց վրա բազմաթիվ բնական ծաղիկներ էին ամրացված:

Շպալերային արվեստի գագաթնակետերից մեկն է համարվում «Միաեղջուրով տիկին» ճանաչված շարքը: Այստեղ անհավանականորեն ձուլվում են նկարչական պատկերումը և դեկորատիվ արվեստը, ռեալիզմը և սիմվոլիկան, արվեստը և փիլիսոփայությունը:

Միաեղջուրով տիկինը» շարքը ստեղծվել է մոտավորապես 1480–1490 թթ, հավանական է Փարիզում: Ենթադրվում է, որ նրա պատվիրատուն եղել է Ժան Լևիստը, ով եղել է Փարիզի անուղղակի ժողովի պալատի նախագահը: Նրա տոհմային զինանշանը՝ լուսնի եռակի պատկերմամբ զրահը, կրկնվում է շպալերների վրա 25 անգամ: Այսպիսով կրում է հերալդիկ բնույթ: Սակայն այն հերալդիկ անվանելը կնշանակի գորգերի մասին ոչինչ չասել: Շպալերները ավելի քան հինգ հարյուր տարեկան են, իսկ արվեստագետները մինչ այժմ շփոթվում են գուշակությունների մեջ, վերլուծելով շարքը շրջապատող լեգենդներն ու գաղտնիքները [3]:

Տիկնոջ ներկայությունը բոլոր շպալերների վրա հանգեցնում է այն մտքին, որ նրանք պատվիրված են եղել հարսանիքի (պսակադրության) համար: Այդ մասին խոսում են նաև ավանդական հարսենական և սիրային նշանները՝ կաղնի, նարինջ, վարդեր, մեխակներ, անմոռուկ և այլ ծաղիկներ: Բայց այդ դեպքում շպալերներում պատկերված կլինեին երկու զինանշան այլ ոչ մեկը:

Հայտնի չէ նախանկարի հեղինակը, հստակ տեղեկություն չկա, թե որտեղ են գորգերը հյուսվել (հնարավոր է բրյուսելյան արհեստանոցում, բայց ֆրանսիական ստվարաթղթերով և ֆրանսիացի պատվիրատուների համար, ինչպես երբեմն արվում էր): Սովորաբար շպալերների շարքը բաղկացած էր լինում ութ շպալերներից՝ երկուական ամեն պատի համար, բայց մեծ սրահների համար ստեղծվում էին շարքեր, որոնցում լինում էին մինչև քսան շպալերներ:

Կասկածի էր ենթարկվում նույնիսկ այն, որ գտնված շպալերները պատկանում էին նույն շարքին: Առեղծվածային է նաև շպալերների խորհրդանիշը և գաղափարը: Միայեղջյուրով տիկինը շպալերների շարքը բաղկացած է վեց մոտավորապես նույն չափի շպալերներից: Հինգը նրանցից հանդիսանում են զգայարանների այլաբանություններ՝ հպում, հոտառություն, համի զգացողություն, տեսողություն և լսողություն: Եզրափակում է շարքը «Իմ միակ ցանկություն» շպալերը:

Պատկերների, կենդանիների և բույսերի դասավորությունը բոլոր գորգերում համարյա միանման են, որոշակի փոփոխություններով: Ստեղծագործությունը այնքան նրբագեղ է, ներդաշնակ և պարզ, որ միանգամից չես նկատում մի յուրահատկություն՝ բոլոր գործողությունները կատարվում են պայմանական կապտա-կանաչ կղզու վրա:

Անսովոր է նաև շպալերի դեկորատիվ լուծումը: Կարմիր ֆոնի վրա՝ ծաղիկները կտրատված են և թափրտած: Կապտա-կանաչ կղզին նույնպես ամբողջը ծաղիկների մեջ է, բայց նրանք պատկերված են այլ կերպ: Եթե կարմիր ֆոնի վրա ծաղիկները ակնհայտ դեկորատիվ դեր են կատարում (ֆոն-կտոր), ապա ծաղկող ճյուղերը կղզու վրա աճում են, նրանք փարթամ են և նույնիսկ երբեմն շողք են գցում: Բացի այդ նրանք շատ խիտ են ծածկում կղզին:

Հրաշալի կղզու վրա հավաքվել են բույսեր ամբողջ աշխարհից: Բնությանը հակառակ միաժամանակ ծաղկել են գարնանային, ամառային և աշնանային ծաղիկներ՝ հովտաշուշան, անմոռուկներ, մեխակներ, վարդեր և այլն: Ծառերը շրջապատում են յուրաքանչյուր հատվածը՝ սոճի, նարինջ, կաղնի:

Ֆոնի և կղզու գույները լոկալ չեն, խուլ են՝ նրանք կարծես շնչում են, արտահոսում տարբեր երանգներով:

Կոմպոզիցիայում կան երեք գլխավոր հերոս՝ տիկինը, միաեղջյուրը և առյուծը: Նրանց պատկերները տեղավորվում են եռանկյան մեջ, որում կենտրոնական և գլխավոր հերոսը միշտ տիկինն է համարվում:

Յուրաքանչյուր դրվագում նա այլ է: Սրանք լրիվ տարբեր կանայք են՝ արտաքինով, տարիքով և բնավորությամբ: Տարբեր են նրանց մազերը և հագուստը: Չորս գորգերում ներկա է նաև սպասուհին:

Ներկայացված են բազմաթիվ կենդանիներ ու թռչուններ: Կղզով և ֆոնով վազվզում են, թռչում են, նստած են, կանգնած են (ցրված են դեկորատիվ արվեստի կանոններով) շները, աղվեսները, նապաստակները, հովազները, գառնուկները, վագրիկները, բադիկներն ու այլոք:

Կենցաղային մանրամասները շպալերներում բերված են նվազագույնին: Համեստ, նեղ երիզը մուգ գույնով է եզրագծում բոլոր գորգերը: Բոլոր գորգերի վրա գեղեցիկ, ճոխ հագնված Տիկինը իշխում է ամենին՝ փոքրիկ աղախնին, հզոր, բայց իրեն ենթարկվող Առյուծին և Միաեղջուրին, ամբողջ կենդանական աշխարհին: Առաջին գործած շպալերում բոլոր կենդանիները վզկապներով ու շղթաներով են: Մյուս շպալերներում դա արդեն չկա: Հաշվի առնելով ոսկյա առյուծի և սպիտակ միաեղջուրի խորհուրդը, որպես արև և լուսին, կարելի է ամեն դրվագը պատկերացնել ինչպես ամբողջ աշխարհի ստեղծումը՝ մարդու գլխավորությամբ: Հնարավոր է և կղզին որոշակի մեկուսացման դրախտի նշան է: Մեր առջև ոչ թե երկրային կյանքն է այլ միայն նրանց սիմվոլիկ նախագիծը: Դեկորատիվ կարմիր ֆոն անելով հեղինակները ստիպված են եղել գործող մարմիններին երկրի վրա կանգնեցնել [4]:

Նմանատիպ բովանդակությամբ շպալեր այլևս չեն հայտնաբերել, բայց փաստաթղթերը վկայում են, որ նրանք եղել են: Նրանք լայն տարածում են ստացել Եվրոպայում XVդարի վերջում և XVI դարում:

Բայց որքան էլ, որ մտածես հիանալի շպալերների մասին՝ նրանց առեղծվածային լինելը չի նվազում: Գուցե հենց դրանում է որոշակիորեն թաքնված նրանց արտասովոր գրավչությունը: Եվ մեր աչքին հաճելի են հենց մաքուր գույները և թելերի ներդաշնակությունը, կերպարների ազնվությունը:

Հավերժ արվեստը հենց դա է, կյանքը՝ որը փայլում է իր անվերջ աննկարագրելիությամբ։

ЛИТЕРАТУРА

1. *Դավթյան Ս.Ս.* Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության / Պատ. խմբ. Կ.Վ. Սեղբոսյան։ – Եր., 1981։
2. *Եղիազարյան Ա.Կ.* Գեղարվեստական գործվածքների արվեստը։ – Եր.։ Տիգրան Մեծ, 2010։
3. *Бирюкова Н.Ю.* Французские шпалеры конца XV–XX века в собрании Эрмитажа: Каталог / Н.Ю. Бирюкова. – Л.: Аврора, 1974. – 172 с.
4. *Коваль Р.* Очарование Мильфлёра – Декоративное искусство СССР, 1984, №5 [21с].

ՄԻԼՖԼՈՐՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԻ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑՆԵՐԸ

Ա.Կ. Եղիազարյան
anush.textile@mail.ru

Մ.գ.դ., պրոֆեսոր,
Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
Կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

АМФОФОРИМ

Շպալերը՝ ձեռքով հյուսված միակողմանի պատի գորգ է՝ բովանդակային հորինվածքով։ Շպալերի հատուկ տեսակներից մեկն է հանդիսանում միլֆլորների արվեստը, որն աչքի է ընկնում իր մոնոխրոմատիկ ֆոնով, ցրված բազմաթիվ ծաղիկնորով (դրանք կարող են տեղադրվել

շատ խիտ կամ ավելի հազվադեպ),որոնք պատկերված են ծայրաստիճան նատուրալիստական կամ ոճավորված եղանակով: Ծաղիկները գրեթե չեն տարբերվում իրական ծաղիկներից, և հենց դա է, որ միլֆլերին յուրահատուկ է դարձնում: Միլֆլեր արվեստի գլուխգործոցներից է վեց գոբելենների հայտնի շարքը՝ «Միաեղջյուրով տիկինը»:

Բանալի բառեր՝ դեկորատիվ կիրառական արվեստ, շպալերի արվեստ, միլֆլոր, վերդյուր, դեկորատիվ հորինվածք, խորհրդանիշ, միաեղջյուր, ծաղիկներ:

MILLEFLEUR MASTERPIECES

A. Yeghiazaryan
anush.textile@mail.ru

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Professor at the Department of Fine Arts,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

Tapestry’s are considered as handmade images. It is a decorative applied art branch and includes a lot of interesting and unique varieties. One of the sole and unique types of espalier is the milflor art, which is distinguished by the background of a single unit. There are many flowers used in the background, which are almost impossible to distinguish from reality, in which is hidden the peculiarity of the milflor art. One of the exceptional masterpieces of the milflor art is the «Lady with unicorn» series, consisting of six-dimensional espaliers.

Keywords: decorative applied art, tapestry, milflor art, verdur art, dekorativ compozition, many flowers, simbol, lady with unicorn.

Информация о статье:
статья поступила в редакцию 07 августа 2021 г.,
подписана к печати в номер 8 (12) / 2021 – 29.11.2021 г.